



ԻՆՖՈՐՄԱՏԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
 ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
 Հեռ. 56 03 60, 091435136, Էլ. ասուցե foi@foi.am, www.foi.am
 FREEDOM OF INFORMATION CENTER NGO
 1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.02.2016թ.
 270-ի 8

ՀՀ Սյունիքի մարզպետ
 պարոն Սուրբիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյանին,

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ (ուժի մեջ է մտել ս/թ հունվարի 1-ից) տեղեկատվության ազատության ոլորտում նոր պարտավորություններ են սահմանվել տեղեկատվություն տնօրինողների համար:



Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչությունն ի՞նչ քայլեր է ձեռնարկել վերոնշյալ որոշման կատարման ուղղությամբ: Մասնավորապես՝

1. 2016թ.-ի հունվարի 1-ից քանի՞ տեղեկատվություն ստանալու էլեկտրոնային հարցում է ստացել Ձեր գերատեսչությունը:
2. Դրանցից քանիսի՞ն է պատասխան տրվել բանավոր, գրավոր, քանի՞սն են վերահասցեագրվել, և/կամ քանի՞սն են մերժվել:
3. 2016 թ.-ի հունվարի 1-ից համաձայն վերոնշյալ Կարգի, Ձեր պաշտոնական ինտերնետային կայքը հնարավորություն տալի՞ս է դիմողներին հարցումներ ուղարկել առցանց՝ կայքի համապատասխան բաժնի միջոցով (Կարգի 6-րդ կետ): Խնդրում ենք ուղարկել համապատասխան հղումը:
4. Կարգի համաձայն՝ 2016 թ.-ին ամփոփվել է արդյոք հաճախակի տրվող հարցերի շրջանակը և պաշտոնական կայքում ստեղծվել է «Հաճախակի տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին: Խնդրում ենք ուղարկել համապատասխան հղումը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Լիանա Դոյդոյան
 Նախագահ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mtaes.am

26 փետրվարի 2016թ. № 03/15/284-16


Ձեր 23-02-2016թ. № 270-ի 8

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ի
նախագահ Լ. Դոյրոյանին

Ի պատասխան Ձեր հարցման՝ ներկայացվում է տեղեկատվություն՝ ըստ հարցադրումների հերթականության.

1. << Սյունիքի մարզպետարանը 2016թվականին ստացել է տեղեկատվություն ստանալու 88 էլեկտրոնային հարցում:
2. Դրանցից տրվել է 78 բանավոր, 10 գրավոր պատասխան, 4-ը վերահասցեավորվել է, 0՝ մերժվել:
3. << Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքը դիմողներին հնարավորություն է տալիս իրենց հարցումներն ուղարկել կայքի <<Դիմեք մեզ>> բաժնի միջոցով:
<http://syunik.mtaes.am/write-online-letter/>
4. Համաձայն գործող կարգի՝ << Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի <<Դիմեք մեզ>> բաժնում առկա է <<Հաճախակի տրվող հարցեր>> ենթաբաժինը
<http://syunik.mtaes.am/hajaxaki-trvox-harcer/>

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Ա. Ծատրյան
Հեռ.՝ (+374 285) 23573
Էլ-հասցե՝ syunik.press@mtaes.am,
syunik.press@mta.gov.am